ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/56-1

ք. Երևան «06» 11 2020 թ.

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Գ. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 8700000 (ութ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-

կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ՏԿԵՆ ԶԿ «Զրահ» ՓԲԸ ք. Երևան, Վարդանանց փակուղի 8 Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ հ/հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621 Տնօրեն	**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ** ք. Երևան, Թբիլիսյան խճ. 43 հ/հ 247964974090010 Արդշինբանկ» ՓԲԸ, ՀՎՀՀ 00842235 Հեռ.՝ (010) 29-48-60. E-mail: avtogaz.arg@mail.ru
---------- Ա. Աբգարյան /ստորագրություն/ Կ.Տ	---------- - /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«ՕԵ» 11 2020թ. կնքված
ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/56-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասա-կարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	09411710/2	Սեղմված բնական գազ	կգ	300	8700000	29000	ք. Երևան, Վարդանանց փակուղի 8	20000	նոյեմբեր, 2020թ
								9000	դեկտեմբեր, 2020թ

Տեխնիկական բնութագիրը

Գազ մեթան, տրանսպորտային միջոցների ներքին այրման շարժիչներում որպես վառելիք օգտագործելու համար: Ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների իրար հաջորդող գազի մշակման մի քանի փուլից՝ խառնուրդի մաքրում,խոնավության և այլ աղտոտիչների հեռացում և սեղմում, որը չի նախատեսում խառնուրդի բաղադրության փոփոխություն: Գազաբալոնի լիցքավորման ընթացքում բնական գազի ավելցուկային ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազաբալոնային միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6 ՄՊա ճնշման սահմանը:
Լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 15^{0}C, ստանդարտը՝ ԳՕՍՏ 27577-87, պայմանական նշանները՝ <<Վախենում է կրակից>>, անվտանգությունը՝ հրավտանգ:
Մատակարարումը կտրոնային:

Տրամադրված կտրոնների սպասարկման համար ապահովված է լիցքավորման կայանների առկայությունը Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Կոտայքի, Արմավիրի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում, Արարատի մարզի Մխչյանի, Արտաշատի, Արարատի համայնքներում և ք. Երևանում: Լցակայանների ցանկը ներկայացված է հավելված №4-ում:

ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված գների իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման ամենաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Զրաո» ՓԲԸ	**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ**
ք. Երևան, Վարդանանց փակուղի 8	ք. Երևան, Թբիլիսյան խճ. 43
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ	h/h 247964974090010
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621	Արդշինբանկ» ՓԲԸ,
Տնօրեն	ՀՎՀՀ 00842235
	Հեռ.՝ (010) 29-48-60,
	E-mail: avtogaz.arg@mail.ru
---------- Ս. Սրբարյան	----------
/ստորագրություն/	Գ. Սարգսյան
Կ.Տ	/ստորագրություն/
	Կ.Տ

Հավելված N 2
«06» 11 2020թ. կնքված
ՀՀՏԿԵՆԶԿ-Զ-ԳՀԱՊԶԲ-20/56-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	09411710/2	Սեղմված բնական գազ											6090000	8700000	8700000

Գնման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ ՏԿԵՆ ԶԿ «Զրահ» ՓԲԸ
ք. Երևան, Վարդանանց փակուղի 8
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
հ/հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

---------- Ա. Արզարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճ. 43
հ/հ 247964974090010
Արդշինբանկ» ՓԲԸ,
ՀՎՀՀ 00842235
Հեռ.՝ (010) 29-48-60.
E-mail: avtogaz.arg@mail.ru

---------- Գ.
/ստորագրություն/
Կ.Տ

«06» 11 Հավելված N 3
2020 թ. կնքված
ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/56-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«06» 11 2020 թ. կնքված
ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/56-1 պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«06» 11 Հավելված 4
2020թ. կնքված
ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/56-1 պայմանագրի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ մարզերում լիցքավորման կայանների առկայության մասին

ԱՂՅՈՒՍԱԿԸ

N	Հանձնարարողների անվանումները	Ավտոգազալցակայանների հասցեները
1	«Մաստարաիոննա» ՍՊԸ	Արագածոտնի մարզ Թալին - Մաստարա խճ.
2	«Ջահ Մոլորակ» ՍՊԸ	Արագածոտնի մարզ ք.Աշտարակ, Երևանյան 76
3	«Ջորամեջ» ՍՊԸ	Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Երևանյան խճ. 99
4	«Ագարակ Գրաֆ Գազ» ՍՊԸ	Արագածոտնի մարզ, գ.Ագարակ
5	«Մուշ-Արայի» ՍՊԸ	Արագածոտնի մարզ, գ. Ափնա
6	«ՊԵՇՏ» ՍՊԸ	Արագածքտնի մարզ, Աշտարակ–Վանաձոր խճ. N2 գազալցակայան
7	«Ար – Մալի» ՍՊԸ	Արագածոտնի մարզ, Աշտարակի խճ.
8	«Արտյոմ Վահագն» ՍՊԸ	Արագածոտնի մարզ, Երևան-Աշտարակ մայրուղու աջակողմյան աջ հատված N8 ԱԳԼԵԿ
9	«Գեղամ և Սիմոն» ՍՊԸ	Արագածոտնի մարզ,գ.Փարպի
10	«ՌՎԳԱԶ» ՍՊԸ	Աշտարակ-Էջմիածին խճ. աջակողմյան հատված
11	«Սափեյան եղբայրներ» ՍՊԸ	Արագածոտնի մարզ,գ. Կաթնաղբյուր
12	«Սլոներ» ՍՊԸ	Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Գրիբոեդովի 5/18
13	Ա.ՄԷԳԱ ՍՊԸ	Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան 99
14	Էդուարդ Ղազարյան ԱՁ	Արագածոտնի մարզ, Աշտարակի խճ. 16
15	Սիգուլ ՍՊԸ	Արագածոտնի մարզ, գ. Քուչակ, խճ. 3
16	Սատիմար ՍՊԸ	ք. Աշտարակ, Երևանյան 2ա
17	Ռեյնբոու ՍՊԸ	ք. Աշտարակ, Երևանյան 1/1
18	Ռիչ Գազ ՍՊԸ	Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Քասախի 1/1
19	Ջորափ Գազ ՍՊԸ	Արագածոտնի մարզ, Աշտարակ-Գյումրի խճ, Փարպի տեղամաս
20	Ագարակ Գրաֆ Գազ ՍՊԸ	Արագածոտնի մարզ, գ. Ագարակ
21	ԿԱՅԾ ՓԲԸ	Արագածոտնի մարզ, Աշտարակի խճ. 16
22	ՍՎ.ԱՆ.ՈՐ ՍՊԸ	Արագածոտնի մարզ, Երևան-Գյումրի մայրուղի 70
23	«Մայ-Արգ» ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Մրգավան, Խ.Աբովյանի 31/1
24	«Վաչիկ Սաֆարյան» ԱՁ	Արարատի մարզ Վեդի – Վանաշեն խճ. 2 կմ.
25	«Պրոֆլիթ ՍԳՍ» ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Տափերական, Ջեյթունի 1
26	«Վեդի Գազ» ՍՊԸ	Արարատի մարզ, ք.Վեդի, Արարատյան 68
27	«ՎԷՍՊ-ԳԱԶ» ՍՊԸ	Արարատի մարզ, գ.Գետափնյա 3 փ., 33
28	«ԱԲՈՒ-ԼԱԼԱ» ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Հովտաշատ, Բարեկամության 1 փակ. Տուն 2
29	«Արաշագ» ՍՊԸ	Արարատի մարզ, Երևան-Երասխ մայրուղի թիվ 4
30	«Թեգաար» ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Արալեզ
31	«ԴԵՅՎ» ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Ուրցաձոր, Գետափնյա 32
32	ԳԱՍՊԱՐ51 ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Արարատ, Երևանյան խճ. 1
33	Հովան-Լիան Գրուպ ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Մխչյան

35	Խճաքար-Մուսա ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Այնթափ
36	Շահումյան-Գազ ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Շահումյան
37	Գարլուս ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Տափերական
38	Սարանդ ՍՊԸ	Արարատի մարզ, ք. Մասիս
39	ՍԷԳ-ՇՈՂ ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Սայաթ-Նովա, Մասիս-Ռանչպար խճ. 7
40	ԱՅՄԵԳԱ ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Արգավանդ, Կենտրոնական 2-րդ փող. Թիվ 8
41	Արտակ ԱԿ	Արարատի մարզ, Երևան-Արտաշատ մայրուղի, աջակողմ
42	Գլոբուս Գրուպ ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Ավշար
43	Արմեն Բալյան ԱՁ	Արարատի մարզ, գ. Արարատ, Վեդու խճ. 1
44	«Պետրոս-Զախար» ՍՊԸ	Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Երևանյան 56ա
45	«Էս-Կա-Վի-Գազ» ՍՊԸ	Արմավիրի մարզ, ք.Մասիս, Էջմիածնի խճ.2
46	«ԱՐԳ - ԼԵՎ - ԳԱԶ» ՍՊԸ	Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, Սարալանջի 1/2
47	«Արտսոլեի» ՍՊԸ	Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Մարգարայի խճ. 10/1
48	«Էջ Գազ» ՍՊԸ	Արմավիրի մարզ, Էջմիածին-Աշտարակ խճղ. աջ կողմում
49	«Էջ Գազ» ՍՊԸ	Արմավիրի մարզ, գ.Արշալույս 38 փ. N1 լցակայան
50	«Էջ Գազ» ՍՊԸ	Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, ԱԳԼԵԿ
51	«Թեմ-Արմ-Կար» ՍՊԸ	Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Երևանյան 15/8
52	«Գոդավար» ՍՊԸ	Արմավիրի մարզ, գ. Քարակերտ
53	«Վովա և Սամսոն» ՍՊԸ	Արմավիրի մարզ, գ. Մրգաշատ
54	«Ֆակել գազ» ՍՊԸ	Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Ի. Գասպարյան 43
55	«Ավենտուս» ՍՊԸ	Արմավիրի մարզ, գ. Հացիկ
56	Նորապատ ԱԿ	Արմավիրի մարզ, գ. Քարակերտ
57	Կարինե Քոչարյան ԱՁ	Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Երևանյան փող. 135
58	«Բենս-Գազ» ՍՊԸ	Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Մայրաքաղաքային 15/2
59	«Վեգաս» ՍՊԸ	Արմավիրի մարզ, գ. Մրգաշատ
60	«Գուդգազ» ՍՊԸ	Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Գորկու փող. 148/1
61	«Մոնակո» ՍՊԸ	Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Շահումյան 3
62	Զվարթնոց Գազ ՍՊԸ	Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մաշտոցի 19
63	Անուլ-Հ ՍՊԸ	Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Երևանյան 7/2
64	Լի Գազ ՍՊԸ	Արմավիրի մարզ, գ. Ոսկեհատ, Բարեկամության 2/5
65	«Հուսիկ Սեդրակյան և ընկերներ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Երևան-Սևան 58կմ
66	«Ավետ-Միեր» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ ք.Մարտունի, Կամոյի փող. 50
67	«ԳԱՌՉԻՆՈ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Երևան-Սևան մայրուղու 52 կմ
68	«ԼԵՎԼԵՆ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Երևան – Սևան մայրուղի 57կմ
69	«Տելեմաք Գազ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Գագարինի խճ. 61/4-61/5, Գեղամավան համայնք
70	«ԵՐ-ՐՈՒ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Սևան - Գավառ խճ. 3կմ գ.Չկալովկա
71	«Մակվիչ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս, Մյասնիկյան 19
72	«Արմեն -Վահագն»	Գեղարքունիքի մարզ, գ.Աստղաձոր, Արցախի փ. ԱԳԼԵԿ
73	«Փարոս» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիկ
74	«ՀՊՆ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գ. Ծովազարդ, Ծովակալ Իսակովի 12
75	ԱՐՄ ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Գավառ, Սարալանջային 11
76	Զարթարար ՍՊԸ	[illegible]

77	ԳԱԶ-ԱՄԱ ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Կարմիր Բանակի 10
78	«Արծափ-Շին» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Ծովագյուղ կայարան 2/16
79	«Էներգոսերվիս» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Խաղաղության 33
80	«Անուշ Քնար» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գ. Խաչաղբյուր
81	Վովսամ ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն
82	ՄԱՐՏԳԱԶ ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Աբովյան փող. 7
83	Վարդան Մնացականյան ԱՁ	Գեղարքունիքի մարզ, Երևանյան խճ. 53
84	ՌՈՍԱԼԻԱ ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Երևանյան խճ. 1
85	Ջի Էս Էյջ ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Ծովինար 5 թաղ. 14 փող. 34
86	Գավառտրանս ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Սայադյան 4
87	ԱԼԻՔ ԱԿ	Երևան-Դիլիջան խճ. 76 կմ
88	«Քյավառ-Նաիրի» ՍՊԸ	Երևան-Սևան մայրուղի 1 կմ. Հատված
89	«Ռոբել» ԱԱԿ	ք.Երևան, Լուկաշինի 5
90	«Վ-ՍԱՆԿ» ՍՊԸ	ք.Երևան, Բաբաջանյան 2/2
91	«Ավտոստոպ» ՍՊԸ	ք.Երևան, Ս.Դավիթի 89
92	«Կելլի և Վիլիամս» ՍՊԸ	ք.Երևան, Շիրազի 43
93	Քար Գազ Սերվիս ՍՊԸ	ք.Երևան, Դավթաշեն, Սասնա ծռեր 5
94	«Մուլտի գազ» ՍՊԸ /Շահումյան/	ք.Երևան, Թբիլիսյան խճ. 13/8
95	«Մուլտի գազ» ՍՊԸ /Նուբարաշեն/	ք. Երևան, Նուբարաշեն խճ. 97/3
96	«Մուլտի գազ» ՍՊԸ /Զեյթուն/	ք.Երևան, Ռուբինյանց փողոցի վերջնամաս
97	«Մուլտի Լեոն» ՍՊԸ /Նոր Նորք/	ք.Երևան, Գյուրջյան փող. հարող տարածք
98	«Մուլտի Լեոն» ՍՊԸ /Չարբախ/	ք.Երևան, Շիրակի փող. հարող տարածք
99	«Մուլտի Լեոն» ՍՊԸ /Աջափնյակ/	ք.Երևան, Լենինգրադյան-Ջանիբեկյան խաչմերուկ
100	«Մուլտի Լեոն» ՍՊԸ /Եր. Ջեկ/	ք.Երևան, Թամանցիների և Արտաշատի խճ. խաչմերուկ
101	«Մուլտի Լեոն» ՍՊԸ /Եր. Լիճ/	ք.Երևան, Իսակովի պող. հարող տարածք
102	«Ապտես» ՍՊԸ	Երևան-Աշտարակ մայուղի 35
103	«Դենտալ Իմպորտ» ՍՊԸ	ք. Երևան, Հաղթանակ թաղ. 2 փող. 8/1
104	«Օլիվեստա» ՍՊԸ	ք. Երևան, Բաբաջանյան փող.
105	ԳԻՄԱՍ ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի 1/5
106	«ԳԱՕՄ ԳՐՈՒՊ» ՓԲԸ	ք. Երևան, Դավիթաշեն 3-րդ թաղ. 19/2
107	«Լիր Սթար» ՓԲԸ	ք. Երևան, Նորագավիթ 1-ին փող. 1/6
108	«Գուրգեն Դավթյան» ՍՊԸ	ք. Երևան, Գյուրջյան 14/11
109	«Էլսի Ստիլ» ՍՊԸ	ք. Երևան, Դավիթաշեն 4 թաղ. Միկոյան 103
110	«Գամաբեկ» ՍՊԸ	Լոռու մարզ, ք.Սպիտակ, Վանաձորի խճ. 4
111	Ձորագազ ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Ալավերդի, Շահումյան փող.
112	Արվետ ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Սպիտակ, Երևանյան խճ.
113	Բույլ ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շիրակի խճ.
114	ՎԱՀ-ՎԱՍ ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Վանաձոր, Երևանյան խճ. 123/1
115	Արտուր և Արտակ Սաքանյան ՍՊԸ	Լոռու մարզ, գ. Գուգարք, 14 փող. 15
116	ՎԵՍՆԱ ԱԿ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Երևանյան 1
117	Սարգիս ՍՊԸ	Լոռու մարզ, գ. Օձուն
118	Արթուր Զարգարեանյան ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Վերին թաղամաս 20

119	Սիրվեն Շահբազյան ԱՁ	Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Մայակովսկու 21ա
120	Ախթալշին ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Ալավերդի, Թումանյան 8
121	Նեսար ՍՊԸ	Լոռու մարզ, Շահումյան 13/77
122	Վահան և Ինգա Գրիգորյաններ ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Կիրովի փող. 5 տուն 188
123	Աննա և Կարեն ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Սպիտակ, Օրջոնիկիձե 117
124	Ձաղիձորգազ ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Թումանյան
125	ԱԳ-Դար ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Վանաձոր, Բաղրամյան պող. 58
126	Արձագանք ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 81ա
127	Փաուերֆուլ Էնջին ՍՊԸ	Լոռու մարզ, գ. Ղուրսալի 12/1
128	Ստեփշին ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Ստեփանավան,, Բաղրամյան 130
129	Սեզամ-Գազ ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Վանաձոր, Նարեկացու փող. 67 Գ 2.
130	«Բեսառաս» ՍՊԸ	Լոռու մարզ, ք. Վանաձոր, Շիրակի խճ 38
131	«ԲԵՍԹԳԱԶ» ՍՊԸ	Լոռու մարզ, գ. Ղուրսալ փող. 12, 2
132	«Ալգազ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ.Պռոշյան
133	«Ռ.Մելքոնյան և ընկերներ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ.Արզնի, 1 թաղ. 220/1
134	«ԱԻՍԱ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ.Պրոշյան, Գ.Չաուշի 7/4
135	«Նախշին» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Եղվարդի խճ.
136	«Էջ Գազ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք.Հրազդան, կենտրոն Ա-2 թաղ.
137	«Արդա-Գազ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Կոտայքի փ. 1/80
138	«Մուլտի Գազ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ. Առինջ
139	«Մուլտի Լեոն» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Ջրվեժ
140	«Խաչմերուկ Գազ ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Հայֆիդայիների 41
141	«Կարեն Պողոսյան» ԱՁ	Կոտայքի մարզ, գ.Արզնի
142	«Անդրանիկ Վահագն» ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 4-րդ թաղ. 22/12
143	«ԲԱԳՌԱՖ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Շահումյան 4ա
144	Դանիել-Ա ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Միկրոշրջան 230-27
145	«Գազ-Գրուպ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Արզնի համ. Երևան-Սևան մայրուղի 14
146	«ԴՐԱՅՎ-2014» ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, 5-րդ թաղ. 10/14
147	«Ռեդ Գրուպ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ. Քանաքեռավան, Երևանյան խճ. 1
148	Ռոս Գազ Պլյուս ՍՊԸ	Կոտայքի մարզ, Առինջ համայնք Պ. Սևակ 17թաղ. 41 հողատարածք
149	Թամզա ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, Սևան-Երևան մայրուղի 20
150	«Օրանժ Գազ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Երևան – Սևան մայրուղու 43կմ.
151	«Արզնիգազ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Արզնի համայնք, Երևան – Սևան մայրուղու 2
152	«ՍՄ ԵՎ ՄՍ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ. Զովունի, 1-ին փող. 142/7
153	«ՊՌՈԲԻԶՆԵՍ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ. Արզնի, Երևան-Սևան մայրուղի, Հողամաս 16 և 19՝
154	«Հ.Ա.Շ. ԲԵՍԹ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն զանգվ. Անդրանիկի 8
155	Լարգո Վինչ ՍՊԸ	Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Վանատուր 76ա
156	Արմինե ԱԿ	Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, 8-րդ թաղ. Շենք 2 34
157	Նարինե Վարդանյան և ընկերներ LS	Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Գանգրահեր տղա 1
158	Արթուր Աբրահամյան ԱՁ	Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Թևոսյան 8
159	Ջրաբեր-Գազ ՍՊԸ	Երևան-Սևան խճ. 25

160	«Անի-Մարալիկ» ՍՊԸ	Շիրակի մարզ Մարալիկ-Գյումրի խճ. խաչմերուկ
161	«ՁԱՔ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ջամբուլի 57
162	«ԱՅՈՍ» ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Երևանյան խճղ. 183/1
163	«Էջ Գազ» ՍՊԸ	Շիրակի մարզ, գ.Պեմզաշեն, 15փ. 40-2/1
164	«Մուլտի Գազ» ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Գյումրի
165	«ԱՐԲԱ» ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Երկաթուղայինների 51
166	ԳրիգՍտել ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Արթիկ, Նարեկացի 63
167	ՎԱ-ԱՐՏ ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Գագարինի 1
168	ԱՐԹ-ԹՈՎ ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մայակովսկու 109
169	Մուշ-Կոլ ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Արթիկ, Տուֆագործների 5
170	Էլիտ Արման Շին ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խորենացի 6/87
171	ԱՁ Արշակ Մանուկյան	Շիրակի մարզ, գ. Առափի
172	ԳԱՍՍԱՄ ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 42/1
173	Համակա ՍՊԸ	Շիրակի մարզ, գ. Մայիսյան 9
174	Աշոտ Խլղաթյան ԱՁ	Շիրակի մարզ, գ. Մեծ Մանթաշ, 19 փող. 19 գազալցակայան
175	Գյումրու Ավտոուղիներ ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ղարիբջանյան 3/3ա
176	ՌՈՒԲՌՈՒՍ ՍՊԸ	Շիրակի մարզ, Ազատան 55/1
177	ԱԴԱ-ԳՐԻԳ ՍՊԸ	Շիրակի մարզ, գ. Անուշավան 1/43
178	ՀԱՅԿ-ԳՈՌ ՍՊԸ	Շիրակի մարզ, գ. Ջորակապ 15/11
179	Էքսպրես Գազ ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գարեգին Ա 117
180	ԱՆԻ ԲԲԸ	Շիրակի մարզ, գ. Շիրակավան, Նորաբերի 1
181	«Ավտոգազ» ՍՊԸ	Սյունիքի մարզ,Սիսիան-Գորիս խճ. 2
182	«Արկարգազ» ՍՊԸ	Սյունիքի մարզ,ք. Կապան Գործարանային 16Ա
183	«Արկարգազ» ՍՊԸ	Սյունիքի մարզ, Կապան-Քաջարան խճ. Ձախակողմյան տարածք, Ջորքի թաղ.
184	«ՍԱԼ-ՔԱՐ ԳԱԶ» ՍՊԸ	Սյունիքի մարզ, ք. Գորիս, Քրիստաֆորի 1ա
185	«ՍԱԼ-ՔԱՐ ԳԱԶ» ՍՊԸ	Սյունիքի մարզ, գ. Քարաշեն, Արցախյան 1
186	«Ձաքի» ՍՊԸ	Սյունիքի մարզ, ք.Գորիս, Երևանյան խճ. 2
187	«Վիլլա Գազ» ՍՊԸ	Սյունիքի մարզ, գ.Ագարակ, Կարճևան մայրուղի 7
188	«ԱԳԿ Սերվիս» ՍՊԸ	Սյունիքի մարզ, գ. Սյունիք, Գաղթականների 53/1
189	«Պրոֆավտո» ՍՊԸ	Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 7
190	«Ս.Կ.Կազ» ՍՊԸ	Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մաշտոցի 1/38
191	«Ս.Կ.Գազ» ՍՊԸ	Սյունիքի մարզ, գ. Խնձորեսկ
192	«Նորաշ» ՍՊԸ	Սյունիքի մարզ, գ. Սառնակունք
193	«ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, Վայք – Ջերմուկ խճ. 83/85
194	«Ռոբեն Յ.Հ.» ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, ք. Վայք, Ջերմուկի խճ. 69/3
195	«Էջ Գազ» ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Երևանյան խճ.
196	«ՎԱՀ-ԳԱԼ» ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Երևանյան խճ. 1/6
197	«Արփի Գազ» ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, գ. Արփի, Երևանյան խճ. 10/1
198	Բոնուս Գազ ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Վարդան Ձորավարի 34
199	Ս. Ավետյան և ընկերներ ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, Վայք-Գորիս մայրուղի 2 կմ
200	Ջերմուկի Ստեփանյաններ ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ, Կեչուտ 5,2՝
201	Վայք Գազ ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, ք. Վայք, Ջերմուկի խճ. 22ա

202	«Ա-ՏԵԳ» ՍՊԸ	Տավուշի մարզ,ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 17
203	«Վիցի Գրուպ» ՍՊԸ	Տավուշի մարզ, ք. Բերդ, Այգեստան 78
204	Ինամուր ՍՊԸ	Տավուշի մարզ, ք. Իջևան, Երևանյան 7
205	Աստրոն ՍՊԸ	Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Երևան-Իջևան խճ. 105կմ
206	Ա.Ա.Հ. Ավտոգազ ՍՊԸ	Տավուշի մարզ, գ. Կողբ
207	ԱՁ Պավել Գրիգորի Դանիելյան	Տավուշի մարզ, գ. Աչաջուր, 1 փող. 63
208	Տիմաշլիլ ՍՊԸ	Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 61
209	ՄԱՆԱՐՍ ՍՊԸ	Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 61
210	ԱՏ ԳԱԶ ՍՊԸ	Տավուշի մարզ, գ. Լուսաձոր, 12 փող. 16
211	Առամնա ՍՊԸ	Տավուշի մարզ, ք. Իջևան, Երևանյան փող. 168/1
212	Հովիկ Այվազյան Վաղինակի ԱՁ	Տավուշի մարզ, Այրում համայնք, գ. Բագրատաշեն, 19 թիվ 33
213	Աթո Ցլիկ Ամրամ ՍՊԸ	Տավուշի մարզ, գ. Արծվաբերդ
214	Բերդ և ընկերներ ՍՊԸ	Տավուշի մարզ, գ. Տավուշ, 1-ին փող. 71
215	ԳԱԶԱՐԴԻ ՍՊԸ	Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 83
216	ՍՊԵՑ 1 ՍՊԸ	Տավուշի մարզ, Այրում համայնք, գ, Բագրատաշեն 19 թիվ 33
217	Երաշնար ՍՊԸ	Տավուշի մարզ, Աչաջուր, 1-ին փող. 63/7